ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
(ԵՊՀ)

ՄԵՍԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՄԻՖԸ ԱՅԱԹՈԼԼԱՀ ԽՈՄԵՅՆԻԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իրանի Իսլամական Հեղափոխության առաջնորդ այաթոլլահ Ռուհոլլահ Խոմեյնիի գաղափարախոսությունը մի շարք կրոնա-քաղաքական միֆեր է պարունակում, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի համընդգրկուն պատկերացում ունենալ Իրանի հեղափոխական քաղաքական մշակույթի առանձնահատկությունների մասին: Հոդվածում կանդրադառնանք այդ միֆերից մեկին՝ փրկչի/մեսիայի մասին կրոնա-քաղաքական միֆին:

Քաղական գաղափարախոսությունների մեջ միֆերի օգտագործման կամ այլ կերպ ասած՝ քաղաքական միֆերի մասին փիլիսոփաների ու քաղաքագետների, հասարակագետների ու կրոնագետների մի շարք ուսումնասիրություններ փաստում են, որ դրանք ամենևին էլ եզակի կամ հազվադեպ հանդիպող երևույթներ չեն: Այսպես, Քրիստոֆեր Ֆլուդի մոտ կարդում ենք՝ «միֆաստեղծումը քաղաքական կյանքի բնականոն երևույթ է, չկա ոչինչ արտասովոր դրա մեջ»[1]: Քաղաքական միֆաստեղծման գործընթացի ու դրա վերջնարդյունքի օբյեկտիվ գնահատման համար, սակայն, կարևոր է հստակ տարբերակել քաղաքական միֆը կրոնական միֆից, որի ստեղծման գործընթացը հաճախ շատ ավելի սերտորեն է անցյալի հետ կապված: Եթե համարենք, որ քաղաքական միֆերը սրբազան միֆերի ու քաղաքական գաղափարախոսության միջև ընկած կատեգորիաներ են[2], ապա ժամանակակից համատեքստում քաղաքական միֆը կարելի է բնորոշել՝ որպես գաղափարական շեշտադրումով անցյալի, ներկայի կամ սպասվելիք քաղաքական իրադարձությունների մասին

[1] Flood Ch., “Political Myth: A theoretical Introduction”, Routledge, 2002, p. 30.
[2] Նույն տեղում:

պատում[3]: Եթե այս ձևակերպմանը հավելենք առհասարակ միֆի մասին արված ֆրանսիացի գիտնական Դյութեի ձևակերպումը, ըստ որի՝ «միֆը խմբային ձգտումների անձնավորումն է»[4], ապա կարելի է ասել, որ քաղաքական միֆերն էլ որևէ գաղափարախոսությամբ համախմբված հանրույթների քաղաքական ձգտումների անձնավորումն են: Ձգտումների անձնավորման արդյունքում ծնված այդ պատումները միշտ ներկա են որևէ հասարակության քաղաքական կյանքում: Եվ այնպես, ինչպես սրբազան միֆերը «միշտ մեզ հետ են և միայն թաքնվում են ինչ-որ ստվերներում, իրենց ժամին սպասելով և ի հայտ են գալիս, երբ բոլոր մյուս ուժերը, որ շաղախում են հասարակական կյանքը այս կամ այն պատճառներով կորցնում են իրենց հզորությունը և այլևս չեն կարողանում ետ պահել դիվային, միֆոլոգիական կամ դիցաբանական տարերքները»[5], այնպես էլ քաղաքական միֆերը դուրս են գալիս թաքստոցից, երբ գաղափարախոսական խոսույթների մյուս տարբերակները ի զորու չեն լինում անհրաժեշտ գաղափարական պատնեշն ապահովել քաղաքական տարբեր հոսանքների դեմ:

Այսպիսով, յուրաքանչյուր հասարակությանն ու քաղաքական իշխանությանը հատուկ է միֆաստեղծումը, իսկ հասարակության ու իշխանության համար ճգնաժամային իրավիճակներում այդ միֆերը դառնում են առաջնային, ակտուալ ու կարևոր: Այդպիսի ճգնաժամային, բեկումնային քաղաքական փուլ էր իսլամական հեղափոխությանը նախորդած ժամանակաշրջանն Իրանում: Շահական Իրանի վերնախավի որդեգրած գաղափարախոսությունն ու վարած քաղաքականությունն ավելի ու ավելի էին խորացնում հասարակության ու իշխանության միջև եղած անջրպետը[6] և պարարտ հող ստեղծում ոչ միայն հակաիշխանական տրամադրությունների, այլև քաղաքական այնպիսի միֆերի ստեղծման համար, որոնց շնորհիվ հակաիշխա-

---

[3] Flood Ch., նշվ. աշխ., էջ 42:

[4] Кассирер Э., Техника современных политических мифов, Вестн, сер. 7, № 2, Философия, МГУ, 1990, с. 60.

[5] Նույն տեղում, էջ 61:

[6] Chehabi H., “The Shah’s Two Liberalizations: Re-Equilibration and Breakdown”, in “Iran and the Challenges of the Twenty-First Century”, Mazda Publishers, 2013, p. 29.

նական գաղափարներն ու տրամադրությունները դառնում էին օրվա հրամայականը։ Մի կողմից հասարակության սոցիալական ու գաղափարական բևեռվածությունը, մյուս կողմից՝ երկրի հոգևորականների նվազող դերն ու նշանակությունը երկրում, ինչպես նաև մի շարք հոգևորականների հանդեպ հաշվեհարդարները, քաղաքական նոր միֆաստեղծման առանցք են դարձնում հենց իսլամական դիցաբանական պատումները։

Նկարագրված ճգնաժամային պայմաններում է Իրաք աքսորված այաթոլլահ Խոմեյնին Նաջաֆում դասախոսությունների շարք սկսում, որոնք հետագայում դառնում են իր «Վելայաթե Ֆաղիհ»՝ կրոնագետների կառավարում տեսության առանցքը[7]։ Կրոնա-քաղաքական այս տեսությունը, որ խարսխված էր շիայական «ֆաղիհների» տեղի ու դերի վերաիմաստավորման, ինչպես նաև նրանց հոգևոր իշխանությանը նաև քաղաքական նշանակություն տալու նպատակի վրա, ակտուալացնում էր մի շարք կրոնական միֆեր՝ դրանք կրոնա-քաղաքական միֆերի վերաձևելով։ Այդպիսի քաղաքական միֆերի օրինակ են մեսիայի, արդար կառավարման, մարտիրոսության ու իսլամական համախմբված աշխարհի մասին միֆերը։

Իսլամական մեսիայի՝ իմամ Մահդիի մասին կրոնա-դիցաբանական պատումները Իրանի կրոնա-քաղաքական ավանդույթի ու պատմության անքակտելի մասն են կազմում։ Այաթոլլահ Խոմեյնին այդ պատումները վերաիմաստավորել, դրանք դարձրել է իր գաղափարախոսության առանցքային ուղենիշներից մեկը։ Աշխարհն ավերածություններից ու աղետից ազատող փրկչի մասին միֆական պատկերացումներն այն աստիճան կարևոր դերակատարություն են ունեցել/ունեն իրանական հասարակական-քաղաքական կյանքում, որ հասարակությունն անգամ ընդունելի է համարել այդ պատումների երկփեղկվածությունը՝ մի կողմից Խոմեյնիի գրչով վերաիմաստավորված պատումներ, մյուս կողմից՝ Խոմեյնիի անձի շուրջ հյուսված ու վերամարմնավորված պատումներ։

---

[7] Abrahamyan E., “Khomeinism: Essays on the Islamic Republic”, Berkeley, University of California, 1993, p. 24.

Տասներկուիմամական շիայական կրոնական պատկերացումների համաձայն՝ տասներկուերորդ իմամ Մուհամմադը, որ կրում է նաև Մահդի՝ փրկիչ անունը, ոչ թե մահացել, այլ անհետացել է։ Ինչպես բազում այլ վախճանաբանական, ապոկալիպտիկ ու մեսիանական իսլամական պատումները, Մահդիի մասին իսլամական այս պատումը նույնպես աղերսներ ունի մինչիսլամական՝ զրադաշտական, մանիքեական ու քրիստոնեական նույնաբովանդակ պատումների հետ։ Տասնմեկերորդ իմամ Հասան Ասքարիի (մահ. 874 թվականին) մահից հետո շիայական համայնքում իրարամերժ կարծիքներ են ի հայտ գալիս նրա որդու գոյության ու իմամաթի ժառանգման առնչությամբ. որոշ խմբեր համոզված էին, որ Հասնի որդին մահացել է տակավին մանկահասակ տարիքում, մյուսները կարծում էին, որ թեև որոշակի տարիների կյանք է ունեցել, բայց արդեն իսկ մահացած է հոր մահվան պահին, իսկ երրորդները համոզված էին, որ Հասանն, առհասարակ, որդի չի ունեցել[8]։ Եվ, միայն հավատացյալների շատ փոքր խումբ համոզված էր, որ Հասանի որդին չի մահացել, թաքուցման մեջ է և վերադառնալու է որպես Մահդի՝ առաջնորդ, և որպես «Ժամանակի վերջ»՝ «աքեր ալ-զաման»։ Այս գաղափարն ընդունած ու Մահդիի մասին այս պատումն իրական համարած խումբն էլ դարձավ տասներկուիմամականների շիայական ճյուղը։ Բոլոր տասներկու իմամների, ինչպես նաև իմամ Մահդիի թաքուցման՝ «ղայբայի» մասին հիշատակմամբ ամենահին տեքստը Ալի էբնե Էբրահիմե Ղոմիի «Թաֆսիրն» է, որ գրվել է «փոքր թաքուցման» ժամանակաշրջանից մի քանի տարի հետո[9]։ Դարերի ընթացքում գրված մի շարք կրոնական գրքերի մեջ հիշատակված այս իմամը ի հայտ է գալիս տարբեր մականուններով՝ «մահդի» *(mahdi, փրկիչ),* «մոնթազար» (*montaẓar, սպասված),* «սահեբ ալ-զաման» (*ṣāḥeb al-zamān, ժամանակի տիրակալ),* «ալ-ղայբ» (*al-ḡā'eb, թաքնված*),

[8] Encyclopedia Iranica, online edition, London, 1996, Islam in Iran vii. The Concept of Mahdi in Tweler Shi'ism, http://www.iranicaonline.org/articles/islam-in-iran-vii-the-concept-of-mahdi-in-twelver-shiism

[9] Նույն տեղում:

«հոջաթոլլահ» (*ḥojjat Allāh,* Աստծո ապացույց), «սահեբ ալ ամր» (*ṣāḥeb al-amr*, պատճառի տիրակալ), «բաղիյաթ ալլահ» (*baqiyat Allāh*, Աստծո մնացուկ), ինչպես նաև «ղայեմ» (*qā'em*, կանգուն, մեկը, որ շարունակում է պայքարը)[10].

Փոքր թաքուցումից ու մի քանի միջնորդների միջոցով հավատացյալների հետ Մահդիի շփումից հետո, տասներկուիմամականները թևակոխում են Մահդիի Մեծ թաքուցման ժամանակաշրջանը[11]: Թաքուցման անհրաժեշտության համար շիայական կրոնական ավանդույթը չորս պատճառ է նշում՝

- Մահդիի անձնական անվտանգությունը,
- ժամանակի իշխանությունների հետ որևէ կապի բացառումը՝ նրանց բոլորի անարդար լինելով պայմանավորված,
- հավատացյալների հավատի փորձությունն ու
- ևս մեկ պատճառ, որ գաղտնի է պահվում մինչև Մահդիի վերադարձը[12]:

Այաթոլլահ Խոմեյնին նույնպես իր ելույթներում շեշտում էր, որ Մահդիի ծնունդը Մուհհամադ մարգարեի ծննդյան պես մարդկության տոներից մեկն է, քանի որ նա կոչված է իր վերադարձով վերացնելու ողջ տառապանքն ու բռնապետությունը[13]: Միաժամանակ, նրա՝ «Վելայաթե ֆաղիհ» տեսությամբ ազդարարված կրոնագետների արդար կառավարման մասին դրույթը, վերափոխում էր Մահդիի թաքուցման մասին պատճառներից մեկը ու արդար իշխանությունների գոյությունը հնարավոր դարձնում նաև մինչև Մահդիի վերադարձը: Մինչև Խոմեյնին Մահդիի՝ թաքուցման մեջ գտնվելու ընթացքում շիաների՝ ժամանակի իշխանություններին ենթարկվել-չենթարկ-

---

[10] Encyclopedia Iranica, online edition, London, 1996, Islam in Iran vii. The Concept of Mahdi in Tweler Shi'ism, http://www.iranicaonline.org/articles/islam-in-iran-vii-the-concept-of-mahdi-in-twelver-shiism

[11] Encyclopædia Iranica, online edition, New York, 1996, Said Amir Arjomand, article "ĠAYBA", http://www.iranicaonline.org/articles/gayba

[12] Ali Amir Moezzi M., "The divine guide in Early Shi'ism: The sources of Esotericism in Islam", New York, 1994, p. 114.

[13] Khomeini R., "Sahifeh-ye-Imam", Vol. 12, p. 408.

վելու վերաբերյալ մի քանի կարծիքներ կային. ոմանք պնդում էին, որ քանի որ մինչև Մահդին բոլոր իշխանությունները բռնապետական ու աստվածային օրենքից շեղված են լինելու, նրանց հնազանդության անհրաժեշտություն չկա, իսկ հարկեր ու նվիրվածություն պետք է բաշխել ոչ թե օրվա քաղաքական իշխանություններին, այլ հոգևոր առաջնորդներին: Մյուսները, հիմնվելով շիայական վեցերորդ իմամ Ջաֆար ալ Սադեղի խոսքի վրա, ըստ որի «վատ կառավարիչն ավելի լավ է, քան կառավարչի բացակայությունը», համարում էին, որ հասարակական քաոսից խուսափելու համար պետք է հավատարիմ մնալ նաև մինչև Մահդիի վերադարձն իրենց բաժին հասած իշխանավորներին:[14]

Այաթոլլահ Խոմեյնին, իր հերթին, մի կողմից հայտարարում էր, որ «Մահդիի թաքուցումը հուշում է մեզ, որ «իրական արդարությունը կտարածվի աշխարհում իր բնական տեսքով[15], մյուս կողմից հավաստիացնում էր, որ կրոնագետների կողմից կառավարվող իշխանության ներքո՝ «Վելայաթե ֆաղիհի» պայմաններում հնարավոր ամենաարդար հասարակարգն է կարելի կառուցել[16]: Ավելին, այաթոլլահ Խոմեյնին Իսլամական հեղափոխությունը համարում էր Մահդիի՝ թաքուցումից դուրս գալու առաջին նախապայմաններից մեկը. նրա խոսքով «այս հեղափոխությունը մենք հանձնում ենք Մահդիի ձեռքերին. Աստծո կամոք թող այս հեղափոխությունը առաջին քայլը լինի նրա հայտնության, ում Աստված պատրաստել է, և թող այն ճանապարհ հարթի նրա գալուստի համար»[17]: Այսպիսով, Մահդիի վերադարձի հետ կապված շիայական պատումը, ըստ որի

[14] Abrahamyan E., նշվ. աշխ., էջ 15:
[15] Khomeini R., նշվ. աշխ., էջ 408:
[16] Emam Khomeini, “Velayate-Faghih”, Najaf, 1970.
[17] “Sokhan-e-Rahbar beh Monasebat-e-Majles-e-Yadbud-e-Shahid Beheshti”, Ettela'at, September 23, 1985, հղված՝ Maghen Z., Occultation in "Perpetuum": Shi'ite Messianism and the Policies of the Islamic Republic, Middle East Journal, Vol. 62, № 2 (Spring, 2008), p. 232-257.

նրա գալուստը տեղի է ունենալու երկրային քաոսի ու անարդարությունների պայմաններում, նոր, վերափոխված իմաստ է ստանում[18]:

Իր «Վելայաթե Ֆաղիհ» տեսության միջոցով այաթոլլահ Խոմեյնին կրոնագետներին վերագրում էր ոչ միայն հոգևոր առաջնորդության ու հոգևոր սպասարկման, այլ նաև քաղաքական ղեկավարման ու քաղաքական իշխանության կարևոր դերակատարում՝ այդպիսով վիճարկելով Մահդիի բացակայությամբ բոլոր իշխանությունների՝ իսլամից հեռացած ու Ալլահին ոչ հաճո լինելու փաստը: Մինչև Խոմեյնիի այս գաղափարախոսությունը «Վելայաթե Ֆաղիհ» ասելով շիաները նկատի ունեին շիաների համայնքի կառավարում՝ հոգևոր իմաստով, հասարակության խոցելի խմբերի՝ այրիների, երեխանարի ու ծերերի հարցերի կառավարում: Որոշ բացառիկ դեպքերում շիա հոգևորականներն իրենց կարևոր դերակատարությունն էին ունենում նաև երկրի քաղաքական կյանքում, ինչպես 1891 թ. ծխախոտի կոնցեսիոն պայմանագրի առնչությամբ ծագած ճգնաժամի ընթացքում խաղաց այաթոլլահ, մարջաե թաղլիդ Մոհհամադ Հասան Շիրազին՝ իր հայտնի ֆեթվայով, որ հարամ ու չեղարկման ենթակա էր համարում Բրիտանիայի հետ կնքված պայմանագիրը[19]: Իսլամական հեղափոխությամբ ու դրա արդյունքում ստեղծված Իրանի Իսլամական Հանրապետության ստեղծմամբ, սակայն, ֆաղիհների հիմնական դերն է դառնում պետականաշինությունը, քաղաքական իշխանության իրացումն ու կառավարումը: Հեղափոխությունից հետո 1979 թ. հանրաքվեով ընդունված երկրի Սահմանադրությունը նույնպես ամրագրում է այն փաստը, որ Մահդիի՝ մեծ թաքուցման պայմաններում արդար կառավարման երաշխիք են ֆաղիհները ու նրանց կառավարումն այլընտրանք չունի:

Մահդիի մասին պատումների ակտուալացումը Այաթոլլահ Խոմեյնիի կողմից, ունի նաև իր երկրորդային սեմանտիկ նշանակությունը: Հեղափոխության առաջին տարիներին այաթոլլան ինքը

---

[18] Abrahamyan E., նշվ. աշխ., էջ 14:

[19] Նույն տեղում, էջ 6:

ասոցացվում էր թաքուցումից դուրս եկած, վերադարձած, քառտիկ երկրին արդարություն բերած Մահդիի հետ։ Մահդիի մասին ոչ միայն դիցաբանական պատումը՝ թաքուցման, աքսորի, հանուն անձնական անվտանգության երկրից ու մուսոլումանական համայնքից բացակայության մասին, այլ նաև այաթոլլահի՝ աքսորի, անձնական անվտանգության նկրտումներով երկրից բացակայության ու Մահդիի պես անձնական միջնորդների միջոցով մուսուլմանների հետ առնչության օրինակները, կրոնա-դիցաբանական այդ կերպարը, որ Խոմեյնու շնորհիվ նաև քաղաքական երանգ էր ստացել շատ հեշտությամբ պռոյեկտվում էր նաև հենց իր կերպարի վրա։ Այս համատեքստում որոշ հետազոտողներ պատահական չեն համարում նաև նրա՝ այաթոլլահ Խոմեյնիին «իմամ Խոմեյնի» դիմելաձի կիրառությունը[20]։

ANNA GEVORGYAN
(YSU)

THE MYTHS OF THE MESSIAH IN THE IDEOLOGY OF AYATOLLAH KHOMEINI

The Ideology of the Islamic Revolution of Iran encompasses a number of political myths. The analysis of those myths gives an opportunity of broder understanding of the peculiarities of the Iranian political culture.

The article examines one of those myths: the religio-political myth of the messiah. The twofold political myth anchored on the Islamic tradition of the savior is the subject of the article. It reveals the mythical stories transformed by the Ideology of Ruhollah Khomeini and stories created around his own image in the framework of the same myth.

[20] Maghen Z., նշվ. աշխ., էջ 235։